ՏԵՂԵԿԱՆՔ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ**ՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ** ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 1.** «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 70-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ մասով.~~

~~«6. Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացնելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով: Այդ դեպքում ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու գործընթացը չեղարկվում է:»~~

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ Օրենք) 22-րդ հոդվածում.

1) **լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մաս.**

«1.1. Ապագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացվելու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում՝ գրավոր դիմում ներկայացնելով:»

2) **2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ից 6-րդ կետերով նախատեսված դեպքերում և 8-րդ կետով նախատեսված դեպքում՝ եթե սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում հետ չի վերցրել, ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են օրենքի ուժով, իսկ 7-րդ կետում սահմանված դեպքում՝ ավագանին նիստին ներկա ավագանու անդամների ձայների երկու երրորդով ընդունում է համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում կամ նիստ գումարելու անհնարինության դեպքում ավագանու մյուս անդամները կազմում են արձանագրություն, որը հաստատվում է ներկա ավագանու անդամների երկու երրորդով:»:

Հոդված 2. Օրենքի 70-րդ հոդվածում.

1) **4-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 2-ից 5-րդ կետերով նախատեսված դեպքերում, իսկ 6-րդ կետով նախատեսված դեպքում ավագանու անդամի կողմից եռօրյա ժամկետում հրաժարականի դիմումը հետ չվերցնելու դեպքում համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարը, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում նաև համայնքի ղեկավարի պաշտոնակատարը կամ աշխատակազմի քարտուղարը կազմում են ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:»:

2) **լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ մաս.**

«6. Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացվելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով:»:

Հոդված 2 **3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: